Ազատ գ. Հոկտ. 1993 թ.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍՊԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

ՍՊԱՆԻԱ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ԱՐՑԱԽԻ ԼԱՅՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Հայկական Երկք կուսակցութիւնները ներկայացնող պատուիրակութիւն մը, սեպտեմբեր 16ին այցելութիւն մը տուաւ սպանական դեսպանատուն, ուր ընդունուեցաւ դեսպանատան գործավար Էնրիքօ Մորայի կողմէ։ Սպանիոյ նոր դեսպանը ցարդ պաշտօնապէս չէ ստանձնած իր պատասխանատուութիւնները։

Մորա, նախքան Երեւանի մէջ իր պաշտօնը ստանձնելը, եղած է Եւրոպայի Ազատութեան եւ Գործակցութեան խորհուրդի սպանական պատուիրակութեան անդամ, մօտէն ծանօթ է Արցախի Հարցին եւ այդ կծով զանազան նախաձեռնութիւններուն։

Հայկական պատուիրակութիւնը սպանացի դիւանագէտին ներկայացուց Արցախի կապակցութեամբ Ազատութեան խորհուրդի անդամներուն յղուած յուշագիրը։ Մորա խոստացաւ անմիջապէս զայն փոխանցել իր կառավարութեան։

Սպանիոյ դեսպանատան գործավարը անհրաժեշտ նկատեց Արցախի տագնապին լուծումները որոնել շրջանային մակարդակի վրայ եւ թուեց այն նախաձեռնութիւնները, որոնք ցարդ կատարուած են այս ուղղութեամբ։ Ակնարկելով իր պետութեան կեցուածքին, ան ըսաւ, որ Սպանիա լսաւ կ՚ըմբռնէ հայ ժողովուրդին կրած տառապանքները եւ այդ կծով ունեցած մտահոգութիւնները։ Ան աւելցուց, որ յարգելով հանդերձ Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը՝ Սպանիա անհրաժեշտ կը նկատէ Արցախի տալ լայն ինքնավարութիւն՝ Հայաստանի հետ կապի հնարաւորութեամբ։

Վերջապէս, սպանացի դիւանագէտը շեշտեց հարցը խաղաղ եւ արդար միջոցներով լուծելու անհրաժեշտութիւնը, նշելով որ Եւրոպական պետութիւնները պատրաստ են խաղաղարարական ուժեր դրկել շրջան։ Նկատի ունենալով որ հայկական առաքելութիւնները, ինչպէս նաեւ՝ Եւրոպայի Ազատութեան եւ Գործակցութեան խորհուրդի ակդրունները, Թուրքիա հաւանական թեկնածու մը չի նկատուիր նման ուժի մը կազմութեան ընթացքին։

Յաջիկայ օրերուն, մէջ – կուսակցական, եռանդամ պատուիրակութիւնը պիտի այցելէ Բրիւքսէլ, Հնդպարլոյ եւ Զինուոր դեսպանատները։

«ԱԶԴԱԿ» 17 սեպտեմբեր